

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

«Էջմիածին» ամսագրի սույն համարում հրատարակում ենք նաև մի ուրիշ ուշագրավ հոդված, որ վերջերս հայտնաբերվեց ամսագրիս նախկին խմբագիր Աբրամ Հատիսյանի անձնական թղթածրարից: Հանգուցյալ խմբագրի այդ հոդվածը գրված է 1978 թվականին, Վենետիկի Ս. Ղազար վանքում Մխիթար աբբահոր ծննդյան 300-ամյակին նվիրված հանդիսությանց ժամանակ կարդացված մի վեկուցման առիթով: Հոդվածում հատակորեն երևում է հեղինակի ցնծալոր մտահոգությունը, այն է՝ պաշտպանել Հայաստանյաց Առաքելական Մայր Եկեղեցին հանիրավի արված հարձակումներից, ինչպես նաև պատմական վաստերի սխալ մեկնաբանություններից:

Վերոհիշյալ հոդվածը նույնությամբ տպագրում ենք իբրև պատմության նյութ:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱՄԱ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄՆԵՐ

1977 թվականին համազգային հանդիսությամբ նշվեց Վենետիկի Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացու ծննդյան 300-ամյակը:

Այդ հոբելյանին Մայր Աթոռ ս. Էջմիածինը ևս բերեց իր օրհնությունը Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական հեռագրով, ուր նշվում էր. **«Սուրբ գրական Հայոց աշխարհից և Մայր Աթոռ ս. Էջմիածնից ողջույն և օրհնություն լուսաբնակ Մխիթար աբբահոր նվիրական հիշատակին և ազգանվեր վաստակին:**

Հայ ժողովրդի վերածնունդի հորիզոնի վրա միշտ պայծառորեն պիտի փայլի նաև նրա անմահ գործը»:

1977 թվականի սեպտեմբերին հոգևոր ճեմարանի հարկի տակ բովանդակալից դասախոսությամբ ոգեկոչվեց հիշատակը Մխիթար Սեբաստացու, և ըստ արժանվույն գնահատվեց ու մեծարվեց նրա կրթական-մատենագրական մեծ վաստակը:

1977 թվականի հոկտեմբերի 22—23-ին, երբ հեռավոր ս. Ղազար վանքում տեղի ունեցավ Մխիթարի ծննդյան 300-ամյակին նվիրված հոբելյանական եկրափակիչ հանդիսությունը, հանուն Հայոց Հայրապետի ներկա էր նաև Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը:

Մխիթար Սեբաստացու հոբելյանը շնորհավորեցին նաև Մեծի Տանն Կիլիկիո, Երուսաղեմի ու Կ. Պոլսի մեր Մայր Եկեղեցու Աթոռները:

Հայ Եկեղեցին, այսպիսով, Մայր Աթոռ ս. Էջմիածնի գլխավորությամբ, ջերմորեն իր մասնակցությունը բերեց սույն հոբելյանական հանդիսություններին:

Ս. Ղազարում, եկրափակիչ հանդիսության ժամանակ, Քրիստոնյաների Միության Քարտուղարության նախագահ Նորին Գերաշնորհություն կարդինալ Ժան Վիլլբրանդը, որպես գլխավոր վեկուցող, հանդես է եկել «Մխիթար և քրիստոնյաներու միությունը» թեմայի շուրջ բովանդակալից և խիստ շահեկան մի ճառով, որի մեջ, սակայն, տեղ էին գտել մի քանի ոչ ուղիղ դատումներ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և անցյալում եկեղեցական պառակտումների վերաբերյալ, անշուշտ սխալ տեղեկությունների հիման վրա, տեղեկություններ, որոնք, վստահ ենք, թե գերհարգելի կարդինալին հաղորդված պետք է լինեն որոշ հայ կաթոլիկ հայրերի կողմից հատուկ միտումով:

Մեր կարծիքով, Մխիթար Սեբաստացու ծննդյան 300-ամյակը պետք չէ առիթ հանդիսանար Հայ Եկեղեցու մասին ժամանակավրեպ վեճեր հարուցելու և պատմական ստույգ փաստերը նենգափոխելու:

Այսպես, վերոհիշյալ ճառի մեջ տեղ էր գտել այն պնդումը, թե «Հայ նվիրակները չէին կրցած Քաղկեդոնի ժողովին մասնակցիլ, քանի որ իրենց երկիրը այն ժամանակ գրավված էր պարսիկներեն», և թե «Ժողովին վարդապետությունը, սակայն, միշտ ընդունված էր, գոնե էական կետերուն մեջ, իր ուղղափառ բովանդակությամբ: Հռոմի հետ երբ հարաբերություններն ավելի սերտացան, կարելի եղավ վարդապետական հստակության մըն ալ հասնիլ Քաղկեդոնի բանաձևին շուրջ, և Հռոմի Աթոռին հետ կատարյալ հաղորդակցության մը գաղափարականը կրցաւ հաղթանակել Փլորենտիո ժողովին մեջ, Մխիթարի ծնունդեն 200 տարի առաջ»:

Այս դատումը ամենևին չի համապատասխանում պատմական իրողությանց:

Հայտնի է, թե ինչ նպատակներով ու ինչ պարագաների ներքո էր գումարվել Փլորենտիո ժողովը (1439 թ. հունիս) հույն-կաթոլիկ եկեղեցական միություն ստեղծելու համար, այն պահին, երբ օսմանցիք արդեն հասել էին Կ. Պոլսի դռներին, և Եվգինեոս Գ Պապը (1439—1447), օգտագործելով այդ ողբերգական պահը, փորձում էր Արևելքի եկեղեցիների վրա իր ազդեցությունը տարածել: Սակայն պատմական ճշմարտությունն այն է, որ Փլորենտիո ժողովի որոշումները երբեք ընդունելի չեղան հույն օրթոդոքս եկեղեցուն:

Փլորենտիո ժողովում ընդունված «Հավատո դավանական վճիռը», «Գայթակղության և աննկարագրելի հուսմունքի առիթ տալով, չէր վավերացվել հունական կղերի կողմից, որով և մնացել էր լոկ թղթի վրա» (Հակոբ Անասյան, «Հայկական աղբյուրները Բյուկանդիայի անկման մասին», Երևան, 1957, էջ 16):

«Հույն կղերը իր ստվար մեծամասնությամբ և հույն ժողովուրդը իր բովանդակ կանգվածով դիմադրեց հանուն միության տեղի ունեցող այս փորձերուն: Բյուզանդիոնի մեջ պայթեցավ պայրույթի փոթորիկ մը և դուռ բացավ բուռն վեճերու» (Հ. Ճ. Սիրունի, «Պոլիս և իր դերը», Բեյրութ, 1965, էջ 133):

Իսկ ի՞նչ եղավ հայերի դիրքը այդ նույն ժողովի հանդեպ:

Հայ Եկեղեցին էլ հրավիրվել էր ժողովին: Այդ ժողովին Հայ Եկեղեցու մասնակցության գաղափարն ու նախաձեռնությունը Կաֆայի ճենովացի կաթոլիկ կառավարչին էին պատկանում՝ Հռոմի թելադրությամբ: Ո՛չ Կոստանդին կաթողիկոսը, ո՛չ Երուսաղեմի պատրիարքը, ո՛չ Կ. Պոլսի հայ եպիսկոպոսները պաշտոնապես չէին մասնակցել Փլորենտիո ժողովին: Կաֆայի հայոց առաջարկով է, որ Կոստանդին Զ կաթողիկոսը համաձայնվում է Փլորենտիո ժողովին ուղարկել չորս հայ հոգևորականներ (երեքը՝ Կաֆայից և մեկը՝ Հալեպից), պարզապես իբրև Հայ Եկեղեցու սիրո և եղբայրության պատգամաբերներ, առանց դավանաբանական կամ Հռոմին հպատակվելու հարցերով զբաղվելու իրավասության: Կոստանդին Զ կաթողիկոսը այդ ժողովին Հայ Եկեղեցու մասնակցության մասին գրել էր նախօրոք Դիարբեքիրի հայոց նշանավոր առաջնորդ Մկրտիչ Նաղաշ եպիսկոպոսին՝ նրա կարծիքն ունենալու համար: Մկրտիչ Նաղաշ եպիսկոպոսը 1436 թ. մայիսի 16-ին կաթողիկոսին գրում է, որ միության որպես պայման պետք է պահանջել **«Ի լատինացւոց և ի յունաց, զի նախ թողցեն զՔաղկեդոնիկն լինել և զբաժանմամբ դաւանութիւն և ապա ի խնդիր լիցին միաբանութեան»**, ինչպես վկայում է հայ կաթոլիկ պատմաբան հայր Միքայել Չամչյանցը («Պատմութիւն հայոց», Վենետիկ, հատ. Գ, 1774, էջ 474—475):

«Այնպես որ Փլորենտիո ժողովը, փողով ու թմբուկով ծանուցված, չկրցավ դեր կատարել: Ան չկրցավ Հռոմի ծոցը բերել ոչ հույները, ոչ ալ հայերը» (Հ. Ճ. Սիրունի, նույնը, էջ 137):

Հետևաբար, պարզ է արևի լույսի պես, որ Փլորենտիո ժողովի որոշումներն ու կոչերը

Հայ Եկեղեցու և հայերի համար մեռյալին ամբողջությամբ անընդունելի և անիրագործելի:

Նույն ձևի մեջ մի երկրորդ սխալ դատում:

Մխիթարը կոչված էր «բացարձակ հավատարմությամբ Հռոմի հավատքին, որ էր ճշմարիտ հավատքը Հայոց Հայրերուն», և թե Մխիթարը հետևյալ հոգևոր կտակն էր թողել իր աշակերտներին՝ նշելով. «Հաստակ մտադրություն կրթուցում իմ բոլոր աշակերտներու և հաշտյաններու, պայմանավ որ իրենք ալ որքան ատեն որ ողջ են՝ աշխատին ծառայելու կաթոլիկե հավատքը...: Կաղաչեմ ու կինդրեմ Հռոմեական սուրբ եկեղեցիեն որ չհուսահատի իմ ազգիս ըմբոստութենեն, այլ շարունակե իր սովորական հոգածությունը՝ զոր ունի, պայն լուսավորելու համար կաթոլիկե հավատքին լույսովը»:

Որքան տարօրինակ է հնչում մեր օրերին բնդգծել կաթոլիկե ս. հավատքի դեմ «Հայ ազգի ըմբոստությունը» բացատրությունը, Էկումենիզմի մեր ժամանակաշրջանում:

Նույն ձևի մեջ տարօրինակ է հնչում նաև այն գնդումը, թե իբր **«Հայ ժողովուրդեն մաս մը, հավոզվելով լատին միսիոնարներու բարոզության, հետգեհետ անտանելի նկատեց հայկական եկեղեցիները հաճախելը, բանի որ հոն նզովքներ կարձակվեին Քաղկեդոնի դեմ»:**

Այս դատողությունը ևս չունի պատմական և տրամաբանական որևէ հիմք և ժամանակին ասվել է՝ պարզապես քաղարկելու համար կաթոլիկ միսիոնարների մարդասիրական բարյացակամ գործունեությունը մեր ժողովրդի ծոցում: Այդ բոլորը եղել են Հայ Եկեղեցու և հայ հավատավոր ժողովրդի երեսին անցյալում անիրաժեշտորեն նետված անհիմն մեղադրանքներ, որոնք պետք չէ մեր օրերին վերստին կրկնվեին, այն էլ Մխիթարյանների հարկի տակ:

Երրորդ սխալ դատում:

«Մխիթարը լավ տեղյակ էր, թե քանի՞ կաթոլիկոսներ կամ ուրիշ բարձրաստիճան եկեղեցականներ, բացահայտորեն իսկ արտահայտած էին իրենց հարումը Հռոմին»:

Հայ Եկեղեցու պատմությունը մեր եկեղեցական ողջ տարեգրության մեջ արձանագրել է միայն մի քանի կաթոլիկոսների անուններ, որոնք, առավելապես քաղաքական նկատառումներով, փորձել են լոկ բարեկամական կապեր պահպանել քաղկեդոնականների հետ, ինչ որ երբեք չի նշանակում, թե Հայ Եկեղեցին հարել է Հռոմին: Ընդհակառակն, Հայաստանյայց Եկեղեցին մերժել է նման միտումներ կամ նույնիսկ դատապարտել որոշ «փարանումներ», ինչպես, օրինակ, Եզր կաթոլիկոսի նկատմամբ Կարինի ժողովի վերաբերմունքը 632 թվականին. «Կաթոլիկոսին կոդմն հայտնված վիշտությունը և կապեր կամքին առջև խոնարհիլը, մեծապես պայազատ հայ եպիսկոպոսները և բոլոր հայ ժողովուրդը: Սաստիկ գրգռություն մը բորբոքեցավ Եզրի դեմ...» (Մաղաքիա արքեպ. Օրմանյան, «Հայոց Եկեղեցին», Կ. Պոլիս, 1912, էջ 52):

Մեր պատմության ընթացքում երբեք չի պատահել, որ Հայ Եկեղեցին ընդուներ Քաղկեդոնի ժողովը և հարեր Հռոմի Աթոռին:

Դավանաբանական այս հարցերի նկատմամբ Հայաստանյայց Եկեղեցին սկզբից մինչև մեր օրերը ունեցավ և պահպանեց միևնույն կեցվածքը, որը հստակ կերպով բանաձևում է երջանկահիշատակ Օրմանյան պատրիարքը:

«Հայ Եկեղեցին միաբանությունը հասկցավ միշտ բառին ճիշտ և սեղմ նշանակությամբ: Նա միաբանություն ըսելով ուզեց ունենալ Եկեղեցիներու միջև հոգևորական հաղորդակցություն, փոխադարձ հարաբերություն, իրարու դիրքին հանդեպ հարգանք, յուրաքանչյուրին համար յուր շրջանակին և սահմաններուն մեջ ազատություն և ամենուն ալրա տիրապետող քրիստոնեական սուրբ սերը: Նա երբեք չուզեց հանդուրժել, որ միաբանությունը տիրապետության փոխվի և մարդասիրության վերածվի» (Օրմանյան պատրիարք, «Հայոց Եկեղեցին», Կ. Պոլիս, 1912, էջ 64):

Այս բոլորը ընդգծելով այստեղ՝ մենք չենք կամենում որևէ անհարգալ դատողություն բանաձևել Քաղկեդոնի ժողովի նկատմամբ, այլ պարզապես կամենում ենք պատմական իրողությունները հաստատել: Հայաստանյայց Եկեղեցին անցյալում և մանավանդ մեր դարաշրջանում երբեք անհանդուրժող կամ ոչ հարգալիր ոգի չի ցուցաբերել քույր Եկեղեցիների դավանաբանական դիրքավորումների նկատմամբ, հետևաբար արդար է ասելը, որ մեր քույր Եկեղեցիներն էլ հարգեն նրա դավանաբանական Եփեսոսյան դիրքերը:

Հիշյալ բանախոսության մեջ արծարծված այս երեք դատումները ճշմարիտ արտահայտությունները չեն մեր օրերի էկումենիկ ոգու, արտահայտությունները չեն քրիստոնեական եղբայրության և Եկեղեցիների միջև փոխադարձ հարգանքի: Դրանք կարող են ծառայել՝ վերարծարծելու անցյալի վնասները և բացելու հույսով փակված հին վերքերը և նոր որում ցանելու միևնույն ժողովրդի զավակների միջև:

Ցավալի է արձանագրել, որ որոշ հայ կաթոլիկե հեղինակներ երեք հարյուր տարիներից ի վեր իրենց սխալ տեղեկություններով մոլորեցրել են և այսօր էլ փորձում են մոլորեցնել արևմտյան քրիստոնեական միտքը՝

ձգտելով Հայ Եկեղեցին ներկայացնել որպես Հռոմի դեմ ըմբոստացած և հերձվածող Եկեղեցի, որը պետք է վերադառնա «ճշմարիտ կաթուղիկե հավատքին»:

Այո՛, դժբախտաբար շատ հարգելի կարդինալ Ժան Վիլլեբրանդսը վոռ է գնացել նման ոչ ճիշտ, նենգափոխված տեղեկությունների, որոնցով լեցուն էին, օրինակ, նաև մեր օրերում լույս տեսած Սահակ Կոգյան և Կարապետ Ամատունի եպիսկոպոսների տխրահռչակ ծանոթ գործերը:

Հայաստանյայց Եկեղեցու պատմական կարգացումը և դավանաբանական ուսմունքը հստակ և ամուր կերպով խարսխված են նրա ժողովական որոշումների, հայրապետական վճիռների, վարդապետների մեկնությանց և բազում դարերի փորձի վրա, սուրբ Գրիգոր Լուսավորչի օրերից մինչև մեր օրերի Հայրապետը:

Հետևաբար անհեթեթ կլինի խորհել, թե Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սուտ երկու հազարամյա պատմությունը, դարերի փորձով հաստատված կարգն ու կանոնը և դավանաբանական դիրքը ճշտորոշելու համար պետք է հիմնվել ա՛յլ Եկեղեցիների որոշումների, ա՛յլ եկեղեցական աղբյուրների կամ այլադավան հեղինակների տեսությանց ու մեկնությանց վրա:

Ավա՜ղ, սակայն, որ այս ուղիղ ճանապարհը անտեսվել է, և հայ կաթողիկե հայրեր գերհարգելի կարդինալին են տրամադրել միմիայն միակողմանի աղբյուրներ: Ապացույց՝ ճառին կցված աղբյուրների ցուցակը: Ոչ մի աղբյուր չկա հիշատակված մեր ազգի պատմաբաններից՝ սկսյալ Մովսես Խորենացուց մինչև Օրմանյան պատրիարք, ոչ մի հիշատակում մեր Մայր Եկեղեցու ժողովական որոշումներից, մեր հայրապետների վճիռներից, մեր վարդապետների մեկնություններից, ոչ մի հիշատակում Վասգեն կաթողիկոսի կոնդակից կամ նրա պաշտոնական ճառերից՝ արտասանված 1970-ին Վատիկանում, որոնցով Հայոց Հայրապետը բանաձևում էր Հայ Եկեղեցու արդի մտածելակերպը էկումենիզմի մասին:

Ի՞նչ կարելի է սպասել նման աղբյուրներից և հեղինակներից, որոնք մեր առաքելական Եկեղեցին համարում են հերձվածող, բաժանյալ Եկեղեցի կաթուղիկե Եկեղեցուց և Հռոմի պապական հեղինակությունից: Հիմնվել տըխուր անցյալից եկած նման բրածո հավակնությունների վրա, նշանակում է ժխտել մեր օրերի էկումենիկ ոգին և քանդել համայն քրիստոնեության ճշմարիտ եղբայրության հիմունքները:

Ժամանակն է հիշեցնել Մխիթարյան մեր եղբայրներին, որ հավատարիմ մնան իրենց ավանդական կեցվածքին, չշեղվեն ալիշանյան ոգուց ու շարունակեն իրենց կուտ գիտական ու կրթական առաքելությունը, մի առաքելություն, որ ըստ արժանվույն միշտ գնահատվել է ու գնահատվում է այսօր էլ մեր Մայր Եկեղեցու և համայն հայության կողմից:

Այս երեք կետերի վերաբերյալ մեր վերապահությունը հայտնելուց հետո, կամենում ենք մեր համեմատությունը արտահայտել ճառի եզրափակիչ մտածումների նկատմամբ, որով կարդինալ Հայրը հաստատում է և հավաստիացնում, որ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու գործելու այժմու ուղին պետք է լինի զարգացնել բարեկամական հարաբերությունների և փոխադարձ հաղորդակցությանց մի եկեղեցաբանություն և թե, նրա խոսքերով, «... Այս հեռանկարին դիմաց, այլևս խնդրո առարկա չի կրնար ըլլալ այն պարագան՝ ուր Եկեղեցի մը ուզե իր մեջ ձուլել ուրիշ մը, ուզե իր հատուկ մշակույթը կամ ավանդությունը պարտադրել ուրիշ Եկեղեցիի մը, այլևս անընդունելի կդառնա Արևելքի լատինացումը...:»: «Այս խորհրդածությունը պետք է իբրև մեկնակետ ունենա Հայ Եկեղեցվո և Կաթուղիկե Եկեղեցվո, Հռոմի և Էջմիածնի միջև փոխհարաբերություններու հարաճուն իրականությունը»:

Ահա այստեղ է, որ հանդես է գալիս կարդինալ Վիլլեբրանդսի սեփական ուղիղ դատումը, որ ճշմարտապես հնչում է ողջամիտ ու այժմեական:

Այդ տողերը կարդալիս հույժ մխիթարական եղավ մեզ համար հաստատել, որ գերհարգելի կարդինալի բուն մտածումները ինչքա՜ն ներդաշնակվում են վերևում մեջբերված Օրմանյան պատրիարքի դատումների հետ: Մեր օրերի միջեկեղեցական հարաբերությունների լույսի տակ հետզհետե բարձրանում է պայծառ մտածողությունը Մաղաքիա Օրմանյան պատրիարքի, իբրև վավերական ռահվիրա էկումենիզմի, արդիական իմաստով: Մնում է, որ մեր կաթուղիկե եղբայրները ևս, հատկապես Մխիթարյան հայրերը, այս ոգով և այս գիտակցությամբ մտածեն ու գործեն:

Մենք հավատում ենք էկումենիկ ոգու, էկումենիկ շարժման աստվածահաճո գաղափարի զարգացումներին, սակայն ո՛չ հին, մեծերը վերանորոգելով, ո՛չ մարդորսական ճանապարհներով և ո՛չ էլ պատմական Եկեղեցիների մարմնից հատվածներ անջատելու անօրեն փորձերով: Նման արարքներ կնըպաստեն միայն արգելակելու Եկեղեցիների ապագա բաղձալի միությունը:

«Մենք վստահ ենք,—գրում է Ամենայն Հայոց Հայրապետը,—թե նույն սուրբ Հոգին, որ առաջնորդում է մեզ բոլորիս էկումենիկ

ժամանակաշրջանի վրա, պիտի առավել լուսավորի Եկեղեցիները, որ նրանք գտնեն ամենամերձանիկ բանաձևումները փոխադարձ միության, բանաձևումներ, որոնք լինեն իրոք՝ Աստծուն հաճելի և ընդունելի բոլոր քրիստոնյաների համար, բանաձևումներ, որոնք ապահովեն քրիստոնեական հավատքի հիմնական ճշմարտությունները միայն, առանց սահմանափակելու ազատությունը աստվածաբանական մտածողության, հարգելով ու պահպանելով ավանդականորեն զարգացած ազգային Եկեղեցիների նկարագիրը, մշակույթն ու հոգեբանությունը, և անխախտ պահելով նրանց նվիրապետական ինքնագլուխ ու ինքնավար դարավոր կարգը» (Վազգեն Ա Հայրապետ Հայոց, գիրք երրորդ, ս. Էջմիածին, 1976, էջ 278)։